ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1759 - Ա **31 մարտի 2009թ.**

ՆՈՐՔԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 65/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՎԼՈՒՇ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊԱՐՍՈՒՄՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Պավլուշ Գրիգորի Գրիգորյանի (ծնված 08.02.1937թ.), Համբարձում Հովհաննեսի Պարսումյանի (ծնված 29.09.1967թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նորքի 7-րդ փողոցի հ.65/1 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 658.7քմ, որից 619.96քմ մակերեսով հողամասը Պավլուշ Գրիգորի Գրիգորյանին, Համբարձում Հովհաննեսի Պարսումյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (վկայական տրված 01.11.1994թ. հ. 395), (660քմ մակերեսով հողամասից օգտագործվում է 619.96քմ մակերեսով հողամասը): Օրինական հողամասին կից օգտագործվող 38.74քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող
է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1997 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման 14.10.2008թ. հ. 8149, Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 24.03.2009թ. հ. 20/2-Ե/146 գրությունները, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 16.03.2009թ. հ.20-Ել-1817 եզրակացությունը, համաձայն որի Նորքի 7-րդ փողոցի հ. 65/1 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Նորքի 7-րդ փողոցի հ. 65/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Պավլուշ Գրիգորի Գրիգորյանի, Համբարձում Հովհաննեսի Պարսումյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 619.96քմ մակերեսով հողամասին կից 38.74քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 38.74քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով:

4. Նորքի 7-րդ փողոցի հ. 65 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Նորքի 7-րդ փողոցի հ. 65/1 տուն»:

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Պավլուշ Գրիգորի Գրիգորյանի, Համբարձում Հովհաննեսի Պարսումյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Նորք-Մարաշ թաղապետարան:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ